ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/41

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հաշվի առնելով «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 14.03.2018թ. ներկայացված՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ»-ի կարիքների համար առողջության ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնելու մրցույթը հայտարարել չկայացած պահանջի մասին բողոքը և հիմք ընդունելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2018/41 բողոքն առանց քննության թողնելու մասին «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի 20.03.2018թ. թիվ Ն/ՏՍ-21-1793 գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

ՈՐՈՇԵՑ

«Նաիրի ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 14.03.2018թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**